

## Կայացավ քաղաքացիների 2015 թվականի ապրիլ ամսվա ընդունելությունը

13.04.2015



2015 թվականի ապրիլի 11-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի մոտ կայացավ քաղաքացիների հերթական ընդունելությունը:

Ընդունելության համար ցուցակագրվել էր 107 քաղաքացի, ընդունելության էին եկել 108-ը:

Ֆինանսական օժանդակության խնդրանքով դիմել էին 104 քաղաքացիներ, որոնց խնդրանքը բավարարվեց: Իսկ 4-ը դիմել էին այլ հարցերով՝ պետպատվերով՝ բուժվելու հարցով՝ 2, առողջարանային ուղեգրի խնդրանքով՝ 1, հողային վեճի հարցով՝ 1 քաղաքացի: Բուժման խնդրանքով դիմած քաղաքացիներն ուղեգրվեցին համապատասխան առողջապահական կազմակերպություն, իսկ առողջարանային ուղեգիր տրամադրելու հարցն ընթացքի մեջ է: Հողային վեճով դիմած քաղաքացու կողմից բարձրացված հարցի վերաբերյալ մարզպետը հանձնարարություն տվեց մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝ հաշվառել հարցը, ուսումնասիրել և օրենքով նախատեսված ժամկետներում պատասխանել քաղաքացուն: Հանձնարարվեց նաև՝ աշխատել այն կազմակերպությունների և համայնքի ղեկավարների հետ, որոնց կարգավորման ծիրում են գտնվում նշված հարցին վերաբերող լուծումները: